ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/2346/02/24 ք. Երևան
12 Ապրիլի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ դատարան), նախագահությամբ դատավոր Գայանե Մազմանյանի, ծանոթանալով «ԻՓԻԷՍ» ՍՊ ընկերության ընդդեմ «ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարան» ՝ Ելնելով վերը շարադրվածից՝ խնդրում եմ անվավեր ճանաչել թիվ ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/21 ընթացակարագի շրջանակներում «ԻՓԻԷՍ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունքը չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի համայնքի ղեկավարի 27.02.2024 թվականի թիվ 988 որոշումը: պահանջի մասին հայցադիմումին.

ՊԱՐԶԵՑ

«ԻՓԻԷՍ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Եպրաքսյա Սահակյանը 29.03.2024թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանող ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի՝ ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի համայնքի ղեկավար Է.Բաբայանի՝ 27.02.2024թ. թիվ 988 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:
Հայցադիմումը մակագրվել է դատավոր Տ.Ստեփանյանին՝ 01.04.2024թ.:
Դատարանի /դատավոր Տ.Ստեփանյան/՝ 05.04.2024թ. որոշմամբ հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, վերադարձվել է:
«ԻՓԻԷՍ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Եպրաքսյա Սահակյանը, հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացնելուց հետո, 08.04.2024թ. հայցադիմումը ներկայացրել է կրկին:
Հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ.Մազմանյանին՝ 09.04.2024թ.:

Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը, գտնում եմ, որ հայցվորի կողմից հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:
Գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է գործը նախապատրաստել դատաքննության:
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200-րդ, 234.6-րդ, 234.9-րդ հոդվածներով՝ դատարանը.

ՈՐՈՇԵՑ

Հայցադիմումն ընդունել վարույթ:
Գործի քննության արդյունքում կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով՝ 10.05.2024 թվականին:
Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Գայանե Մազմանյան

Digitally signed by MAZMANYAN GAYANE
6205680386
Date: 2024.04.12 18:17:57 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am